



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 հունիսի 2011 թվականի N 944 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ  
ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ (ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ) ՀԱՏԿԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո Ր Ո Շ ՈՒ Մ է.

1. Սահմանել, որ՝

1) <<Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի մասին>>

Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 10 բաժնի 06 խմբի 01 դասի <<02. Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների համար բնակարանային շինարարություն>> ծախսային ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան քաղաքում կառուցված բազմաբնակարան շենքերի բնակարաններից երեքսենյականոց 3 բնակարանները հանձնվում են Հայաստանի Հանրապետությանը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) <<Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի մասին>>

Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 06 բաժնի 01 խմբի 01 դասի <<02. Բնակարանային շինարարություն>> ծախսային ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ քաղաքում կառուցված բնակելի տներից 4 բնակելի տները և սույն որոշման 1-ին կետի 1-ին

ենթակետում նշված բնակարանները՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի բնակավայրերում սահմանված կարգով հաշվառված՝ հաշմանդամ դարձած զինծառայողների (ազատամարտիկների) անօթևան ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բաշխում և հատկացում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Հաստատել <<Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 06 բաժնի 01 խմբի 01 դասի <<02. Բնակարանային շինարարություն>> ծախսային ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ քաղաքի <<Վարպետաց>> թաղամասում կառուցված և չբաշխված բնակելի տներից բնակելի տուն ստացող Սպիտակ քաղաքի անօթևան ընտանիքների ցուցակը՝ համաձայն N 3 հավելվածի:

3. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարին՝

1) Հայաստանի Հանրապետության անունից Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի քաղաքապետի հետ կնքել սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում նշված բնակարանների նվիրատվության պայմանագիր.

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված նվիրատվության պայմանագիրը կնքելուց հետո մեկամսյա ժամկետում ապահովել պետական սեփականություն հանդիսացող բնակարանների հանձնման-ընդունման գործընթացը՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) սույն որոշման 2-րդ կետում նշված ընտանիքների շրջանում բնակելի տների բաշխման գործընթացն իրականացնել վիճակահանությամբ.

4) սույն կետի 3-րդ ենթակետի համաձայն բնակելի տների վիճակահանությամբ բաշխման արդյունքներով բնակելի տուն ստացող անձանց և նրանց ընտանիքների անդամների հետ Հայաստանի Հանրապետության անունից կնքել նվիրատվության (անհատույց մասնավորեցման) պայմանագրեր՝ նշելով, որ բնակարանները (բնակելի տները) ընտանիքի անդամներին հատկացվում են ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով, և պայմանագրերի նոտարական վավերացման ու գույքի նկատմամբ իրավունքների գրանցման հետ կապված ծախսերը կատարվում են բնակարանը (բնակելի տունը) ստացող անձի միջոցների հաշվին:

4. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին՝ սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետում նշված բնակարանների (բնակելի տների) բաշխման արդյունքներով բնակարան (բնակելի տուն) ստացող անձանց և նրանց ընտանիքների անդամների հետ Հայաստանի Հանրապետության անունից կնքել նվիրատվության (անհատույց մասնավորեցման) պայմանագրեր՝ նշելով, որ բնակարանները (բնակելի տները) ընտանիքի անդամներին հատկացվում են ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով, և պայմանագրերի նոտարական վավերացման ու գույքի նկատմամբ իրավունքների գրանցման հետ կապված ծախսերը կատարվում են բնակարանը (բնակելի տունը) ստացող անձի միջոցների հաշվին:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏ

Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2011 թ. հուլիսի 13  
Երևան

Հավելված N 1  
ՀՀ կառավարության 2011 թվականի  
հունիսի 23 -ի N 944 -Ն որոշման

Ց ՈՒ Ց Ա Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ  
ՔԱՂԱՔՈՒՄ 2010 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ  
ՇԵՆՔԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՆՁՆՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ

NN ը/կ	Շենքի հասցեն	Բնակարանի	
		համարը	սենյակների թիվը
1.	Դեսին փող., N 45 շենք	բն. N 8	3 սենյակ
2.	Դեսին փող., N 47 շենք	բն. N 4	3 սենյակ
3.	Պրոմեթևս փող., N 49 շենք	բն. N 2	3 սենյակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Ց ՈՒ Ց Ա Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ԽԱՐՋԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ԵՎ ՍՊԻՏԱԿ  
 ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ 2010 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻՑ  
 (ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻՑ) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ  
 ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԲԱԽՇՄԱՆ ԵՎ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ  
 ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ (ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ)

N N ը/կ	Հասցեն	Բաշխվող բնակարանի	
		համարը	սենյակների թիվը
քաղ. Ստեփանավան			
1.	Դեսին փող., N 45 շենք	բն. N 8	3 սենյակ
2.	Դեսին փող., N 47 շենք	բն. N 4	3 սենյակ
3.	Պրոմեթևս փող., N 49 շենք	բն. N 2	3 սենյակ
քաղ. Սպիտակ			
1.	Վարպետաց թաղամաս, Երիտասարդության փող., 2-րդ փակուղի	բնակելի տուն N 2	3 սենյակ
2.	Վարպետաց թաղամաս, Երիտասարդության փող., 2-րդ փակուղի	բնակելի տուն N 5	3 սենյակ
3.	Վարպետաց թաղամաս, Երիտասարդության փող., 3-րդ փակուղի	բնակելի տուն N 2	3 սենյակ
4.	Վարպետաց թաղամաս, Երիտասարդության փող.	բնակելի տուն N 31	3 սենյակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
 ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 3  
ՀՀ կառավարության 2011 թվականի  
հունիսի 23 -ի N 944 -Ն որոշման

Ց ՈՒ Ց Ա Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄՊԻՏԱԿ ՔԱՂԱՔՈՒՄ  
2010 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԵՎ ՉԲԱՇԽՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻՑ  
ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՍՏԱՅՈՂ ՄՊԻՏԱԿ ՔԱՂԱՔԻ ԱՆՕԹԵՎԱՆ  
ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ

Ո Ո Ը/Կ	Ազգանունը, անունը, հայրանունը	Անձնագիրը	Անձերի թիվը	Հատկացվող բնակելի տան սենյակների թիվը
1.	Արղամանյան Զորիկ Դավթի	AF 0323603	4	3 սենյակ
2.	Մարկոսյան Լարվենտ Սլավիկի	AF 0712001	4	3 սենյակ
3.	Հակոբջանյան Նազելի Էդվարդի	AK 0536544	4	3 սենյակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ